այսքան դրամ։ Նաև սուպաշոյն ետուն կաշառս, զի ի մէջ գրոյն մահադեղ խառնեալ ընդ զահվէի արբոյց նմա սուպաշին ի գիշերի, յորմէ խոցեալ ի սիրան՝ պառաչէր գոռալով, և աղաղակէր առ Տէր։ Եւ իբրև գոչէր որպէս զառիւծ ի սրտէ իբրև թէ սլաք մտեալ ի թոքն, և ի ձայնէ աղաղակին ամենայն բանտն դղրդէր և բանտարգեալքն ի նմա սարսէին։ Նոյն ժամայն ի ձեռն դահճին ըմբռնեալ կալեալ և յերանացն ճմլեցուցեալ, զի անդէն անկեալ նուաղէր և դառն և սաստիկ մահուամբ և կսկծանօք զհոգին առ Տէր արձակէր թուամ՝ յաւուր շաբաթի երեկոյին, որ Կիրակի լուսանայր՝ յօգոստոս ամսոյ առաջին աւուր» (1658) (10)։

Երեմիա Չելեպի կը շարունակէ նկարագրել աշխարհական տեղապահներուն անօրէնութիւններն ու մեքենայութիւնները և Ազգին անփառունակ վիճակը, մինչեւ Մարտիրոս Վարդապետին պատրիարքական Աթոռ բարձրանալը օգնութեամբ Եղիազար Վարդապետին (Մայիս 1659)։ Շնորհիւ նոր Պատրիարքին, տակաւ կարգ կանոն կը մտնէ Քաղաքին մէջ (11)։ Սակայն Մարտիրոս Վարդապետն ալ շուտով գահընկէց կ'ըլլայ, և Պատրիարքութեան կը տիրանայ Սսի միաբան՝ Ղազար Վարդապետ, թոյլ-

(10) Օրագրութիւն, Անդ, 276—291։
(11) Անդ, 326—328, 330—331։